ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«13» 07 2022թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

**ԲՓ** 0093-22

*Ձեռնարկողը՝* «ՍԱՌԺ» ՍՊԸ
*Շիրակի մարզ, Գ. Բագրավան, փ. 5, տուն 5*

*Գործունեությունը՝* **Շիրակի մարզի Անիի պեմզային տուֆերի հանքավայրի «ՍԱՌԺ» տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**
*Շիրակի մարզ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

**թիվ ԲՓ 0093-22**

**<13> 07 2022թ.**

***Շիրակի մարզի Անիի պեմզային տուֆերի հանքավայրի «ՍԱՌԺ» տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | «ՍԱՌԺ» ՍՊԸ |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Հայտ/, Ծրագիր |
| Գործունեության տեսակը՝ | «Գ» կատեգորիա |
| Տեղադրման վայրը՝ | Շիրակի մարզ, Անի համայնք, գ. Բագրավան |

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 2)-րդ կետի ա. ենթակետի՝ «երկրաբանական ուսումնասիրություններ» վերը նշված նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի:

**Ներածական մաս** Անիի պեմզային տուֆերի երևակման տարածքում «ՍԱՌԺ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը գտնվում է Արագած լեռան հրաբխային լեռնազանգվածի արևմտյան լանջերին, Շիրակի դաշտավայրի հարավային մասում՝ 1500մ-1520մ բացարձակ բարձրությունների վրա: Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40°27′44″հյուսիսային լայնության, 43°33′ 40″արևելյան երկայնության: Մորֆոլոգիական տեսանկյունից տարածքի հյուսիսային մասը հարթավայրային է, իսկ կենտրոնականն իրենից ներկայացնում է բլրային տարածք, որին բնորոշ է կտրտված, ոչ խորը և ջրազուրկ ձորակներ:

**Նկարագրական մաս**: Անիի պեմզային տուֆերի «ՍԱՌԺ» տեղամասի երևակումը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Անիի տարածաշրջանում: Տեղամասին մոտակա բնակավայրերն են՝ Խարկով, Անիպեմզա, Բագրավան և Անի գյուղերը, որոնց հետ հետախուզվող օբյեկտը կապված է գրունտային ճանապարհներով և գտնվում է 1կմ-5կմ հեռավորությունների վրա: Մոտակա ե/գ կայարանը Բագրավանն է, որը Երևան քաղաքից գտնվում է 112 կմ հեռավորության վրա:

Վարչական առումով երևակման տարածքը ներառված է Անի խոշորացված համայնքի Բագրավան բնակավայրի սահմաններում: Գործունեության համար Ընկերության կողմից հայցվող տարածքը զբաղեցնում է 3,23 հա մակերես, հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ արոտավայրերի: Դիտարկվող տարածքում ստորերկրյա ջրային հորիզոնները և աղբյուրները բացակայում են, ինչը պայմանավորված է տարածքը կազմող հրաբխային ծագման ապարների ֆիզիկա-մեխանիկական հատկություններով և բարձր ծակոտկենությամբ: Հիմնական ջրային զարկերակը սահմանային Ախուրյան գետն է, որը երիզում է երևակման տարածքը արևմուտքից և հոսում է երևակման տարածքից 160մ կտրվածքով ներքև:

Ուսումնասիրվող տեղամասին հարակից հատվածներում առկա են բազմաթիվ շահագործվող հանքավայրեր, ձևավորվել է տեխնածին լանդշաֆտ /բացահանքեր, լցակույտեր, արտադրական հրապարակներ/, ինչով պայմանավորված տարածքը զուրկ է բուսական և կենդանական աշխարհից: Հողային ծածկույթը ներկայացված է մուգ-շագանակագույն հողերի ենթատիպերով /պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում/ զգալի տարածքներում մերկանում են մայրական ապարների ժայռային ելքերով:

Ընկերության կողմից հայցվող տարածքն, ինչպես նաև հարակից շրջանները չեն առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների կամ բնության հուշարձանների հետ: Դիտարկվող տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել:

Պեմզային տուֆերի «ՍԱՌԺ» տեղամասի երևակումը ARM WGS-84 կոորդինատային համակարգով բնութագրվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով:

| | | |
|---|---|---|
| 1. | X=4481824 | y=8378148 |
| 2. | X=4481920 | y=8378025 |
| 3. | X=4482037 | y=8377998 |
| 4. | X=4482072 | y=8378027 |
| 5. | X=4482112 | y=8378061 |
| 6. | X=4482021 | y=8378140 |
| 7. | X=4481978 | y=8378194 |
| 8. | X=4481849 | y=8378175: |

Տուֆերի երևակման «ՍԱՌԺ» տեղամասում Ընկերության կողմից նախատեսվում է կատարել մանրազնին երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ դրանց արդյունքում պարզել տուֆերի պիտանելիությունը բլոկների արդյունահանման համար: Ծրագրով նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման մեթոդներն ընտրվել են հաշվի առնելով հետախուզվող տեղամասի երկրաբանական կառուցվածքը և լեռնատեխնիկական պայմանները, ինչպես նաև տեղանքի ռելիեֆը: Հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 15 մ խորությամբ 8 հորատանցքերով, որոնց միջոցով կուսումնասիրվի և կնմուշարկվի տուֆերի հաստվածքը: Ընտրված հետախուզացանցը /որը նախատեսված է հետախուզական փորվածքների միջև 75-150մ հեռավորությամբ/, թույլ կտա հետախուզված պաշարները գնահատել A կարգով:

Սույն Ծրագրով նախատեսվում է կատարվել է տեղամասի /3.23 հա մակերեսով տարածքում/ 1:2000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ: Ըստ անհրաժեշտության աշխատանքների իրականացման ընթացքում կկատարվի տոպոգրաֆիական հիմքի ճշտգրտում՝ բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ, որի հիմքի վրա կկազմվի տեղամասի երկրաբանական քարտեզը:

Ծրագրով նախատեսված աշխատանքները ներառում են՝ տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ, փորձնական բացահանքի անցում, նմուշարկում, ֆիզիկամեխանիկական լաբորատոր փորձարկումներ և ուսումնասիրություններ: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով բոլոր հորատանցքերը նախատեսվում է նմուշարկել 5-ական մետր երկարությամբ նմուշներով: Յուրաքանչյուր հետախուզագծի վրա հորատանցքերի միջոցով օգտակար հաստվածքը կուսումնասիրվի ամբողջ հզորությամբ: Հորատման աշխատանքները կիրականացվեն ինքնագնաց հորատող հաստոցով՝ սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի միջոցով՝ 132մմ և 112մմ տրամագծերով կարծր համաձուլվածքային թագիկներով:

Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի պաշարների եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար նախատեսվում է ինքնագնաց հորատող հաստոցով հորատել 8 հորատանցք /հորատող հաստոցի 8 տեղակայում և տեղահանում/՝ մինչև 15մ խորությամբ, ընդհանուր 120մ ծավալով, ինչը ենթակա է փոփոխման կախված երկրաբանական աշխատանքների արդյունքից: Հորատահանուկի նվազագույն ելքը՝ 90% է:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, բնական մերկացումները և փորձնական հանույթի բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով, որոնց ծավալները ըստ տեսակների հետևյալն են.

- հորատահանուկի փաստագրում 120 գծ.մ,
- փորձնականբ բացահանքի փաստագրում 10մ,
- փաստագրման ընդահանուր ծավալը՝ 130 գծ. մ:

Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ 100 խ.մ. ընդհանուր ծավալով, որից 80 խ.մ. թարմ չհողմնահարված տուֆեր են: Փորձնական բացահանքի անցման ժամանակ նախապես հեռացվող 20մ$^3$ ծավալով հողաբուսական շերտը աշխատանքների ավարտից հետո օգտագործվելու է ռեկուլտիվացիոն աշխատանքների համար:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բնական մերկացումներից ու բացահանքից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 24 հանուկային նմուշ /մինչև 5.0 մ երկարությամբ/ և 2 մենաքար բացահանքից: Նախատեսվում է 1 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար, ինչպես նաև 2 նմուշ՝ քիմիական կազմը որոշելու համար: Վերցված նմուշները կենթարկվեն համապատասխան փորձարկումների, համապատասխան լիցենզավորում ունեցող ընկերության լաբորատորիայում:

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է երևակման ամբողջ տարածքում կատարել ռադիոմետրիական չափումներ: Տուֆերի երևակման ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ: Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել ապարների առանձնահատկությունները և կազմը, ճեղքավորվածությունը և այլն:

Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հանքային գոտիները, հիմնական ջրատար հորիզոնները, ուսումնասիրել ջրի որակը և կատարել ռեժիմային դիտարկումներ:

Հաշվի առնելով տեղամասի հարթ ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, երկրաբանական ուսումնասիրության ընթացքում հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում:

Ծրագրավորվող աշխատանքների ընթացքում ժամանակավոր ազդեցություններ կդրսևորվեն մթնոլորտային օդի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Հողային ծածկույթի վրա կարճատև բացասական ազդեցություն կդրսևորվի հետախուզահորերի և փորձնական բացահանքի անցման ժամանակ: Այդ աշխատանքների ընթացքում հողի վերին շերտը 0.3մ առավելագույն հզորությամբ նախատեսվում է ձեռքով հանել, կուտակել անմիջապես փորվածքի հարևանությամբ, այնուհետև նմուշարկման և փաստագրման աշխատանքներից ավարտից հետո օգտագործել խախտված տարածքների

վերականգնման/ռեկուլտիվացիայի/ նպատակով: Կփխրեցվեն և կվերականգնվեն նաև հորատման հաստոցի տեղակայման վայրերի հողային ծածկույթը: Դաշտային ճամբարի կառուցման համար հողերի օտարում չի պահանջվում, քանի որ աշխատակիցները կօգտվեն մոտակա բնակավայրերում վարձակալված բնակելի տան անհրաժեշտ կենցաղային պայմաններից /կեցավայր, լոգարան, սննդի վայր/:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր, հետևաբար ջրային ռեսուրսների աղտոտում չի նախատեսվում, քանի որ հորատումը կատարվելու է հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թագիկներով՝ առանց հորատման լուծույթների կիրառման:

Ընկերության կողմից ջրային ռեսուրսներից ջրառ չի կատարվելու, ջրցանի համար անհրաժեշտ տեխնիկական ջուրը և աշխատակազմի համար խմելու ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով՝ մոտակա Բագրավան բնակավայրից:

Բուսական բնական ծածկույթը կխախտվի միայն հորատման հարթակների և փորձնական բացահանքի տարածքում, ազդեցությունը կկրի կարճատև բնույթ:

Պեմզային տուֆերի երկրաբանական ուսումնասիրության տեխնոլոգիական գործընթացների հետ կապված կառաջանա առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա) կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, որը պետք է վերահսկվի սահմանային թույլատրելի մակարդակի ցուցանիշն ապահովելու համար:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- ուսումնասիրվող տարածքներում նավթամթերքների պահեստավորման, մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքների բացառում,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր, /Ընկերությունը ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերելուց հետո պայմանագիր կկնքվի համայնքի հետ/,
- արտանետվող վնասակար նյութերի չեզոքացնող սարքերի /զտիչներ/ տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- փոշենստեցման նպատակով ճանապարհի և հորատման հարթակների ջրցան /անհրաժեշտ տեխնիկական ջուրը պայմանագրային հիմունքներով կգնվի և կտեղափոխվի տեղամասեր մոտակա բնակավայրերից/,
- աղմուկի և թրթռումների մակարդակի վերահսկողություն,
- թռչունների բների հայտնաբերման դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների իրականացման վայրերից դուրս,
- բեռների և աշխատակազմի փոխադրում գոյություն ունեցող ճանապարհներով՝ կենսամիջավայրի խախտումը բացառելու նպատակով,
- մինչև դաշտային աշխատանքների սկիզբ աշխատանքներին մասնակցող անձնակազմի վերապատրաստում /ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում/,
- տեղամասերի տարածքներում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տվյալ բուսատեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացում՝ ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան,
- խախտված լանդշաֆտի վերականգնում/ռեկուլտիվացիա:

Ռեկուլտիվացիայի նպատակով փորձնական բացահանքի անցման անմիջապես փորվածքի հարևանությամբ կուտակված հողի վերին շերտը հետախուզական աշխատանքների ավարտից հետո կօգտագործվի փորձնական բացահանքի տարածքի ռեկուլտիվացիայի նպատակով: Մինչև հողաշերտով վերականգնելը փուշտա շերտի առաջացումները հետ են լցվելու փորձնական բացահանքի տարածք: Աշխատանքների ավարտից հետո կփխրեցվեն նաև հորատման հարթակների մակերեսները:

Ռեկուլտիվացված տարածքներում կկատարվի նաև տարածքին բնորոշ խոտային բուսականության սերմերի ցանք: Վերականգնման ենթակա ընդհանուր մակերեսը կկազմի 60մ²: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացնել 158.24 հազ.ՀՀ դրամ: Ռեկուլտիվացիոն աշխատանքները կատարվելու են հետախուզական աշխատանքներին մասնակցող անձնակազմի կողմից:

Ընկերության կողմից հայցվող տարածքներում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ լցակույտ չի կազմակերպվելու և կուտակման և կառավարման ենթակա ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանա, քանի որ փորձնական բացահանքի անցման ժամանակ առաջացած մակաբացման ապարները /20մ³ հողաբուսական շերտը և 102մ³ ընդհանուր ծավալով փուշտա շերտ/ ամբողջ ծավալով օգտագործվելու են ռեկուլտիվացման աշխատանքների ժամանակ:

Հորատման աշխատանքների արդյունքում կառաջանան մաշված, որակական հատկությունները կորցրած հորատման թագիկներ: Հայցվող տարածքներում հորատումը և դրա հետ փոխկապակցված բոլոր աշխատանքներն իրականացվելու են մասնագիտացված կազմակերպության կողմից, հետևաբար Ընկերության կողմից հորատման թագիկների թափոնների կառավարում չի նախատեսում:

Մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքները իրականացվելու են Բագրավան, կամ Անիպեմզա բնակավայրերում՝ համապատասխան մասնագիտական ծառայություններ մատուցող ընկերությունների տարածքում:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար կարևորվում է աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ շարժական կապի միջոցների առկայության ապահովումը, հետախուզական, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի պատրաստվածությունը, ինչպես նաև առաջին բուժօգնության միջոցների առկայությունը:

Անիի պեմզային տուֆերի «ՍԱՌԺ» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում Ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնց իրականացման ծախսերը գնահատվել են 350.0հազ.ՀՀ դրամ:

***Եզրափակիչ մաս:*** Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Շիրակի մարզպետարանը, պաշտպանության, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Բագրավան համայնքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, կարելի է եզրահանգել, որ երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված աշխատանքների ժամանակ Հայտում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում և ստորև բերված փորձաքննական պահանջների կատարումն ապահովելու դեպքում շրջակա միջավայրի, մարդու առողջության և հնագիտական տարածքների վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկանխարգելվեն, կամ կնվազեցվեն:

**Փորձաքննական պահանջներ**

1. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
2. Տեղամասերի տարածքներում ըստ անհրաժեշտության՝ ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանության նպատակով «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում:
3. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և դրանց ժամանակացույցերը: ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018թ. N 191–Ն որոշման պահանջներին համապատասխան իրականացնել նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների մշտադիտարկումներ և արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
4. Աշխատանքներն իրականացնելիս պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«ՍԱՌԺ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Շիրակի մարզի Անիի պեմզային տուֆերի հանքավայրի «ՍԱՌԺ» տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան

Ընդամենը՝ 6 էջ